



Հիմնական տնտեսական միտումները Հայաստանում

Մարտ 2006

Ներկայացվում են 2006 թվականի մարտի դրությամբ առկա վերջին ամսական ցուցանիշները. ՀՆԱ-ի, համախառն թողարկման, պետական բյուջեի, արտաքին հատվածի վերջին թարմ ամսական տվյալները վերաբերում են հունվարին, իսկ ֆինանսական, արտարժույթային և սպառողական շուկաների ցուցանիշները՝ փետրվարին:

Ելենա Մանուկյան

Հրատարակվում է «Օքսֆամ» ՄԲ աջակցությամբ



Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների ամփոփում

	2003	2004	2005	2003	2004	2005	2006
	տարեկան ցուցանիշներ			հունվարի ցուցանիշներ			
Իրական հատված							
Մեկ շնչին ընկնող ՀՆԱ (ԱՄՆ դոլար)	874.4	1,106.7	1,513.7	28.1	33.8	43.9	49.8
ՀՆԱ-ի իրական աճ (%)	14.0	10.1	13.9	10.6	4.4	3.6	7.7
Արդյունաբերության աճ (%)	15.6	2.1	7.4	9.9	-8.6	-0.9	-1.9
Գյուղատնտեսության աճ (%)	4.2	14.5	11.2	6.0	4.3	0.6	4.1
Շինարարության աճ (%)	45.5	13.4	35.1	95.3	-25.8	0.2	4.7
Տրանսպորտ և կապի աճ (%)	8.2	16.9	13.2	20.6	9.3	12.3	15.0
Առևտուր և հանրային սննդի աճ (%)	14.1	10.5	9.6	9.8	9.7	6.3	9.3
Ծառայությունների աճ (%)	8.6	12.1	10.4	5.9	11.3	18.1	12.7
ՀՆԱ-ի դեֆլյատոր (%)	4.6	6.0	3.1	4.2	12.4	8.6	-3.1
Սպառողական գների ինդեքս (d/2 միջին, %)	4.7	7.0	0.6	3.9	6.3	4.9	-1.9
Հարկաբյուջետային հատված (պետական բյուջեի ցուցանիշներն ըստ ֆինանսավորման)							
Հարկային եկամուտներ (մլրդ դրամ)	212.2	250.1	304.3	11.0	15.8	19.5	23.2
Ծախսեր (մլրդ դրամ)	242.0	295.9	395.2	8.9	11.2	11.5	17.2
Դեֆիցիտ (մլրդ դրամ)	-8.1	-2.0	22.2	-4.3	-6.6	-16.5	-10.8
Հարկային եկամուտներ (ՀՆԱ-ի %)	13.1	13.2	13.7	20.9	25.6	28.1	32.1
Ծախսեր (ՀՆԱ-ի %)	14.9	15.6	17.7	17.0	18.1	16.6	23.7
Դեֆիցիտ (ՀՆԱ-ի %)	0.5	0.1	1.0	8.1	10.7	23.8	14.9
Արտաքին հատված							
Արտահանում (ՖՕԲ, մլն ԱՄՆ դոլար)	685.6	722.9	950.4	42.1	37.7	43.3	47.8
Ներմուծում (ՍԻՖ, մլն ԱՄՆ դոլար)	1,279.5	1,350.7	1,767.9	87.2	84.1	115.4	117.4
Առևտրային հաշվեկշիռ (մլն ԱՄՆ դոլար)	-593.9	-627.8	-817.6	-45.1	-46.4	-72.1	-69.6
Արտահանման աճ (%)	35.7	5.4	31.5	16.1	-10.4	14.9	10.5
Ներմուծման աճ (%)	29.6	5.6	30.9	36.2	-3.6	37.3	1.7
Առևտրային հաշվեկշիռ (ՀՆԱ-ի %)	21.2	17.7	16.8	50.1	42.7	51.1	43.4
Դրամավարկային հատված							
Փողի զանգված (d/2 վերջ, մլրդ դրամ)	233.8	285.9	365.6	185.2	221.0	269.8	354.6
ՀՀ ԿԲ շուտ արտաքին ակտիվներ (մլրդ դրամ)	157.8	168.9	237.6	124.4	151.5	160.0	214.8
Փողի զանգվածի շրջապտույտի արագություն*	6.9	6.6	6.1	0.3	0.3	0.3	0.2
Փողի բազմարկիչ	2.1	2.2	1.9	1.8	2.1	2.3	1.9

* Հաշվարկվել է որպես անվանական ՀՆԱ-ի և փողի զանգվածի հարաբերություն:

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ՏՀՀ կենտրոնի հաշվարկներ:

Ֆինանսական, արտաբերության և սպառողական շուկաներ

	2002	2003	2004	2005	Հունվար	Փետրվար
	տարեկան ցուցանիշներ				2006-ի ամսական ցուցանիշներ	
Պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերություն (%)						
9-12-ամսյա ՊԿՊ-ներ	15.6	9.7	-	-	4.9	4.1
Միջնաժամկետ մասնակի մարումներով	19.7	-	5.6	-	-	4.9
ՀՀ ԿԲ բանկային տոկոսի հաշվարկային դրույք	19.0	18.0	16.0	16.0	16.0	16.0
Վարկերի տոկոսադրույքներ	18.8	20.9	18.2	17.3	16.9	na
Ավանդների տոկոսադրույքներ	4.2	6.4	4.4	6.5	6.4	na
Դրամ / ԱՄՆ դոլար միջին փոխարժեքի աճ (%)	3.3	0.9	-7.8	-14.2	0.5	-0.3
Դրամ / ԱՄՆ դոլար փոխարժեք (d/2 վերջ)	584.9	566.0	485.8	450.2	449.2	450.7
Դրամ / ԵՎՐՈ փոխարժեք (d/2 վերջ)	606.9	702.2	661.1	532.4	542.7	534.2
Դրամ / ՌԴ ռուբլի փոխարժեք (d/2 վերջ)	18.3	19.2	17.5	15.6	16.0	16.0
Սպառողական գների ինդեքս (d/2 վերջ, %)	2.0	8.6	2.0	-0.2	3.6	0.2
Պարենային ապրանքներ*	1.9	12.4	2.8	-1.2	5.2	0.2
Ոչ պարենային ապրանքներ	2.7	0.4	0.0	2.1	0.0	0.1
Ծառայություններ	1.5	2.1	0.5	1.9	0.1	0.3

* Ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ:

Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ՀՀ ԱՎԾ, ՏՀՀ կենտրոնի հաշվարկներ:

Հիմնական միտումները

Իրական հատված

2006 թվականի հունվարին տնտեսական աճի կրկնակի արագացման պայմաններում մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն 2005-ի հունվարի համեմատ ավելացավ 6 ԱՄՆ դոլարով և կազմեց 50 ԱՄՆ դոլար:

7.7 տոկոս տնտեսական աճի 3.6 տոկոսային կետը ձևավորվեց ապրանքների զուտ հարկերից մուտքերի՝ 21.4 տոկոսով աճի արդյունքում:

Հիմնական ճյուղերի շարքում աճի առավել բարձր տեմպերով աչքի ընկան տրանսպորտը (կապը)՝ 15 տոկոս, ծառայությունները՝ 12.7 տոկոս, ինչպես նաև առևտրի ճյուղը՝ 9.8 տոկոս, որոնց մասնակցությունը տնտեսական աճին կազմեց՝ 0.9, 1.7 և 1.5 տոկոսային կետ համապատասխանաբար: Արդյունաբերության ճյուղի համախառն ավելացված արժեքը կրճատվեց 1.9 տոկոսով:

ՀՆԱ-ի 43.4 տոկոսը ձևավորվեց ի հաշիվ ապրանքների արտադրության, 37.6 տոկոսը՝ ծառայությունների մատուցման և 19 տոկոսը՝ ապրանքների հարկումից (առանց սուբսիդավորման):

Բյուջետային հատված

ՀՀ ՖԷՆ նախնական տվյալների համաձայն 2006 թվականի հունվարին պետական բյուջեի եկամուտները նախորդ տարվա հունվարի համեմատ կրճատվեցին 98.6 միլիոն դրամով կամ 0.4 տոկոսով, իսկ ծախսերն ավելացան շուրջ 1.5 անգամ: Այնուամենայնիվ, եկամուտների՝ ծախսերի նկատմամբ մոտ 1.6 անգամ գերազանցման արդյունքում ձևավորվեց ՀՆԱ-ի 15 տոկոսին համարժեք հավելուրդ:

2006-ի հունվարին բյուջեի եկամուտների անկումը ոչ հարկային եկամուտների մոտ 7 անգամ կրճատման արդյունք էր: Նշված ժամանակահատվածում հարկային եկամուտների 19.3 տոկոսով աճը հիմնականում եկամտահարկի գծով մուտքերի կրկնապատկման, ինչպես նաև շահութահարկից և ԱԱՀ-ից մուտքերի, համապատասխանաբար, 51.3 և 12.5 տոկոսով աճերի արդյունք էր: Հարկային եկամուտների աճը 1.8 տոկոսային կետով զսպեցին պարզեցված հարկի և բևոզտագործման վճարներից ստացվող մուտքերի անկումը՝ 23.9 և 20.1 տոկոսով համապատասխանաբար:

2006 թվականի հունվարին պետական բյուջեի ծախսերի հիմնական ուղղությունը կազմեցին հատկացումները պաշտպանության և սոցիալական ոլորտների ծրագրերին՝ 5 և 3.6 միլիարդ դրամ համապատասխանաբար: Կրթության ու գիտության, ինչպես նաև առողջապահության ծրագրերին, որոնց 2005-ի հունվարին միջոցներ ընդհանրապես չէին հատկացվել, 2006-ի հունվարին ուղղվեց, համապատասխանաբար, 468 և 14 միլիոն դրամ: Հատկացումների առավել մեծ աճը՝ շուրջ 26 անգամ, տրանսպորտ (ճանապարհային տնտեսություն և կապ) խմբին ուղղված միջոցների գծով էր:

Պետական բյուջեի ծախսերի կառուցվածքում նախորդ տարվա հունվարի համեմատ մոտ 3.5 անգամ ավելացան աշխատավարձի, 2.6 անգամ՝ կապիտալ ծախսերի ֆինանսավորմանն ուղղված միջոցները: Սուբսիդավորմանն ուղղված միջոցների կրկնակի կրճատման արդյունքում վերջիններիս կշիռը բյուջեի ծախսերի կառուցվածքում նվազեց 7.9 տոկոսային կետով և կազմեց 3.7 տոկոս:

Արտաքին առևտուր

2006 թվականի հունվարին արտահանման աճը 8.8 տոկոսային կետով առաջանցիկ էր ներմուծման աճից: Արդյունքում 2005-ի հունվարի համեմատ 3.5 տոկոսով բարելավվեց առևտրային հաշվեկշիռը, որի բացասական մնացորդը կազմեց ՀՆԱ-ի 43.4 տոկոսը: Առանց 1.6 միլիոն ԱՄՆ դոլարի մարդասիրական օգնության առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդը կազմեց 68 միլիոն ԱՄՆ դոլար:

Արտաքին առևտրաշրջանառության առավել մեծ ծավալները Ռուսաստանի Դաշնության և Գերմանիայի հետ առևտրի գծով էին՝ 24.5 և 17.2 միլիոն ԱՄՆ դոլար համապատասխանաբար:

Հանրապետության մարզերից արտաքին առևտրում առավել ընդգրկված էին Երևանն ու Կոտայքի մարզը, որոնց բաժին ընկավ արտահանման, համապատասխանաբար, 51.1 և 29.3 տոկոսը, իսկ ներմուծման՝ 70.5 և 16.5 տոկոսը:

Հունվարին մարդասիրական օգնության կարգով ներմուծվեց 155.6 տոննա ապրանք, որոնց հիմնական մասը կազմեցին մանածագործական իրերը՝ 44.4 տոկոս և մեքենաները (սարքավորումները և մեխանիզմները)՝ 19.6 տոկոս: Մարդասիրական օգնությունը հիմնականում ստացվել էր ԱՄՆ-ից (67.2 տոկոս), Գերմանիայից (14.2 տոկոս) և Ֆրանսիայից (11.8 տոկոս):

Դրամավարկային հատված

Ըստ ՀՀ ԿԲ նախնական տվյալների փողի զանգվածը 2006-ի հունվարի վերջին՝ 2005-ի դեկտեմբերի վերջի համեմատ նվազեց 10.9 միլիարդ դրամով, ընդ որում կրճատվեցին ինչպես բանկային համակարգից դուրս կանխիկը՝ 13.6 միլիարդ դրամով, այնպես էլ դրամով ավանդները՝ 4.1 միլիարդ դրամով: Միևնույն ժամանակ արտարժույթով ավանդները, որոնք շուրջ 17 միլիարդ դրամով գերազանցում են շրջանառությունում եղած կանխիկը և մոտ կրկնակի՝ դրամով ավանդները, աճեցին 4.8 տոկոսով:

2005-ի հունվարի համեմատ փողի զանգվածն աճեց 31.4 տոկոսով, որը հիմնականում շրջանառության մեջ կանխիկ դրամի շուրջ 60 տոկոսով աճի արդյունք էր: Դրամով ավանդներն ավելացան 58 տոկոսով, որի արդյունքում աճեց նրանց կշիռը փողի զանգվածի կառուցվածքում՝ կազմելով 21.6 տոկոս: Արտարժույթով ավանդներն ավելացան 5.8 տոկոսով, սակայն փողի զանգվածի կառուցվածքում նրանց կշիռը կրճատվեց 10 տոկոսային կետով և կազմեց 42 տոկոս:

Արտարժույթային փոխարժեքներ

2006 թվականի փետրվարի ընթացքում ՀՀ դրամի փոխարժեքն ԱՄՆ դոլարի և ռուսական ռուբլու նկատմամբ, ընդհանուր առմամբ, դրսևորեց արժեզրկման վարքագիծ, եվրոյի նկատմամբ՝ արժեվորման: Փետրվարի ընթացքում ԱՄՆ դոլարի, եվրոյի և ռուսական ռուբլու փոխարժեքների առավելագույն մակարդակները կազմեցին, համապատասխանաբար, 451.2, 544.4 և 16.0 դրամ, իսկ առավելագույն տատանումը՝ 10 դրամ, եվրոյի փոխարժեքի գծով էր:

Փետրվարի վերջին 2005-ի դեկտեմբերի վերջի համեմատ դրամի փոխարժեքն արժեզրկվեց, այդ թվում՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ 0.5 դրամով, եվրոյի՝ 1.8 դրամով, ռուսական ռուբլու՝ 0.4 դրամով:

2006 թվականի հունվար-փետրվարին ՀՀ դրամի միջին փոխարժեքն արժեվորվեց բոլոր հիմնական արտարժույթների նկատմամբ, այդ թվում՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ՝ 32 դրամով (6.6 տոկոսով), եվրոյի նկատմամբ՝ 88 դրամով (14 տոկոսով), ռուսական ռուբլու նկատմամբ՝ 1.3 դրամով (7.6 տոկոսով):

Սպառողական շուկա

2006 թվականի փետրվարին հունվարի համեմատ սպառողական շուկայում տեղի ունեցավ 0.2 տոկոս գնաճ:

Հունվարի համեմատ պարենային ապրանքների գներն աճեցին 0.2 տոկոսով: Այս ապրանքախմբի կազմում առավել թանկացան շաքարավազը՝ 8.4 տոկոսով, ձկնամթերքը՝ 6.6 տոկոսով, ինչպես նաև բանջարեղենն ու կարտոֆիլը՝ 3.4 տոկոսով: Միևնույն ժամանակ 8.5 տոկոսով իջել են ձկնի և 3.1 տոկոսով՝ մրգի գները:

Ոչ պարենային ապրանքների գներն աճեցին 0.1 տոկոսով, որոնց կազմում առավել նկատելի էր ոսկերչական իրերի 4.8 տոկոսով թանկացումը:

Ծառայությունների գները հունվարի համեմատ աճեցին 0.3 տոկոսով, որոնց կազմում 9.2 տոկոսով թանկացան մշակույթի, 4.9 տոկոսով՝ հեռախոսի (հեռագրի), 2.9 տոկոսով՝ կոշիկի վերանորոգման ծառայությունները:

2005-ի դեկտեմբերի համեմատ սպառողական գների աճը կազմեց 3.8 տոկոս:

2006 թվականի հունվարին ՀՆԱ-ի դեֆլյատորը կազմեց -3.1 տոկոս: Դեֆլյատորի բացասական լինելն ընդհանուր առմամբ վկայում է ՀՆԱ-ի կազմում ընդգրկված վերջնական ապրանքների և ծառայությունների գների, 2005-ի հունվարի համեմատ, իջեցման մասին: Մինչ այդ, 2002 թվականի մարտից ի վեր, ՀՆԱ-ի դեֆլյատորը բացասական չէր եղել:

Հիմնական բյուջետային ցուցանիշներ

Միլիարդ դրամ, ըստ ֆինանսավորման

	2003	2004	2005	2003	2004	2005	2006
	տարեկան ցուցանիշներ			հունվարի ցուցանիշներ			
Պետբյուջեի եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ	250.1	297.9	372.9	13.2	17.7	28.0	27.9
Ընդամենը եկամուտներ	240.2	288.2	363.1	13.2	17.7	28.0	27.6
Ընթացիկ եկամուտներ	237.0	279.1	350.7	13.0	17.7	27.9	25.2
Հարկային եկամուտներ, այդ թվում	212.2	250.1	304.3	11.0	15.8	19.5	23.2
Ավելացված արժեքի հարկ	107.8	117.9	146.8	6.0	8.5	8.9	10.0
Շահութահարկ	17.6	32.0	46.6	0.8	0.9	2.3	3.5
Եկամտահարկ	16.8	20.4	26.6	0.8	1.2	1.4	2.8
Ակցիզային հարկ	39.1	40.7	38.6	1.8	3.0	3.2	3.4
Պետական տուրք	15.2	16.9	17.3	0.5	0.9	0.8	0.9
Ոչ հարկային եկամուտներ	9.5	12.0	29.2	1.5	1.0	7.6	1.0
Կապիտալ եկամուտներ	3.2	9.1	12.4	0.2	0.1	0.1	2.4
Պաշտոնական տրանսֆերտներ	9.9	9.7	9.8	-	-	-	0.4
Պետբյուջեի ծախսեր	242.0	295.9	395.2	8.9	11.2	11.5	17.2
Պաշտպանություն	44.3	52.5	64.4	2.0	3.7	3.5	5.0
Հասարակական կարգի պահպանություն	19.9	23.2	33.3	0.8	1.2	0.5	1.4
Կրթություն և գիտություն	32.9	45.2	58.8	0.5	0.2	-	0.5
Առողջապահություն	18.9	24.3	30.4	0.002	0.2	-	0.01
Սոց. ապահովագրություն և ապահովություն	29.3	35.3	44.1	2.0	1.4	2.5	3.6
Ընթացիկ ծախսեր	214.5	252.8	310.1	8.2	10.4	10.3	14.6
Աշխատավարձ	13.9	24.3	33.2	0.0	0.6	0.3	1.1
Տոկոսավճարներ	11.3	9.8	9.9	0.6	0.5	0.5	0.5
Սուբսիդիաներ	15.1	18.4	16.5	1.0	1.4	1.3	0.6
Ընթացիկ տրանսֆերտներ	43.9	60.1	76.6	2.7	2.1	3.8	5.4
Ապրանքներ և ծառայություններ	130.3	140.1	173.8	3.9	5.7	4.4	7.0
Կապիտալ ծախսեր	21.6	32.7	71.9	0.4	0.1	0.5	1.3
Վարկավորում հանած մարում	5.8	10.5	13.2	0.3	0.6	0.8	1.2
Դեֆիցիտի ֆինանսավորում	-8.1	-2.0	22.2	-4.3	-6.6	-16.5	-10.8

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ:

տոկոս ՅՆԱ-ի նկատմամբ, ըստ ֆինանսավորման

	2003	2004	2005	2003	2004	2005	2006
	տարեկան ցուցանիշներ			հունվարի ցուցանիշներ			
Հարկային եկամուտներ, այդ թվում	13.1	13.2	13.7	20.9	25.6	28.1	32.1
Ավելացված արժեքի հարկ	6.6	6.2	6.6	11.5	13.8	12.9	13.9
Շահութահարկ	1.1	1.7	2.1	1.5	1.4	3.4	4.9
Եկամտահարկ	1.0	1.1	1.2	1.5	1.9	1.9	3.9
Ակցիզային հարկ	2.4	2.1	1.7	3.4	4.9	4.7	4.6
Պաշտոնական տրանսֆերտներ	0.6	0.5	0.4	-	-	-	0.5
Ընդամենը պետբյուջեի ծախսեր, այդ թվում	14.9	15.6	17.7	17.0	18.1	16.6	23.7
Պաշտպանություն	2.7	2.8	2.9	3.9	6.0	5.0	6.9
Հասարակական կարգի պահպանություն	1.2	1.2	1.5	1.6	2.0	0.7	1.9
Կրթություն և գիտություն	2.0	2.4	2.6	1.0	0.3	-	0.6
Առողջապահություն	1.2	1.3	1.4	0.004	0.3	-	0.02
Սոց. ապահովագրություն և ապահովություն	1.8	1.9	2.0	3.8	2.3	3.6	5.0
Դեֆիցիտի ֆինանսավորում	0.5	0.1	1.0	8.1	10.7	23.8	14.9

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ՏՀՀ կենտրոնի հաշվարկներ: